պիսին է Զգլարի մինչև 1933 թ. աշխատած հայ թատրոնը, որպիսին է 1919 թ. Թիֆլիսում ստեղծված «Պրոլետկուլտ» հայկական թատրոնը, որի գեղավարները բոլշևիկներ էին։ Հեղինակն, բան երևույթին, չի կռահել, որ 1918 թ. Թիֆլիսում կազմակերպված «Հայ աշակերտաուսանողական դրամատիկ ընկերությունը» այն հեռանկարից մեկն էր, որ լուրջ ուժեր տվեց սովետահայ թատերական արվեստին (Ա. Դուլակյան, Ս. Աբովյան, Սուրեն Քոչարյան, Սարգիս Քոչարյան և ուրիշները)։ Անհրաժեշտ էր վերջինիս նույնպես հիշել, մանավանդ որ այդ կազմակերպությունը գտնվում էր Թիֆլիսի ամենաառաջադեմ ուժերի ազդեցության տակ, որոնք հետագայում դարձան Սովետական Հայաստանի կուլտուրական շինարարության ակտիվ մասնակիցներ։ Հետո՝ չեն նշված Ղրիմի հայաբնակ վայրերում (Սիմֆերոպոլ, Կերչ, Յայլա, Թեոդոսիա, Զանկոյ, Ղարասու Բազար, Բախչիսարայ, Եվպատորիա) տրված հայկական ներկայացումները։ Չի բնդգծված նաև հայոնի թատերական գործիչ՝ Ճահնեի (Համայակ Ճահինյանի) ղեկավարությամբ գործած թատերախմբի գործունեությունը Ակմավիրում մանավանդ։ Դոնի Նախիջևանում 1920 թ. կազմակերպված հայկական դրամատիկ թատրոնի խումբը (կոչվում էր «Հայ գեբասաների կոոպերատիվ միություն») քիչ ներկայացումներ չի տվել։ Սակայն «Տարեգրության» մեջ նրա 1920 թ. ներկայացումները նշված են իբրև զատ-զատ թատերախմբերի երևույթներ։ Ինչո՞ւ է կարմրոցը հավատացել այն մարդկանց տեղեկություններին, որոնք սիրում են այս կամ այն գործը անհարկի կապել իրենց սեփական անձի հետ։ Այդ նույնը նկատվում է նաև գրքի այլ էջերումն էլ։

Մի թյուրիմացության պարզաբանում ևս ու ավարտենք մեր նկատողությունները։ Պետք է մեկընդմիշտ վերացնել այն թյուր կարծիքը, թե Հայաստանի շրջանների թատերական աշխատանքներին ասնչված են 1930-ական թվականներին կազմակերպված «Շրջանային պրոֆեսիոնալ թատրոններին» գործունեության հետ։ Որ այդ թատրոնները շատ խոշոր ու գնահատելի գործ են կատարել, որ նրանք տեղերում մեծ չափով աշխուժացրել են թատերական կյանքը, այդ ոչ ոք չի կարող հերքել կամ ուրանալ։ Արդարությունը պահանջում է ասել, որ որոշ շրջաններում, հատկապես Կիրովականում, Ստեփանավանում, Դիլիջանում, Արտաշատում (նախկին Ղամարլու), գեռ քսանական թվականներին սիրողական և կիսապրոֆեսիոնալ թատերախմբերը շատ ու շատ ներկայացումներ են տվել, որոնք, դժբախտաբար, չեն արտացոլված «Սովետահայ թատրոնի տարեգրության» առաջին հատորում։

Վերը մենք տարեգրությունն բնդհանուր կերպով արժևորել ենք և այն նշել, որպես մի կարևոր երևույթ։ Արված նկատողությունները կարծում ենք կոգնեն հեղինակին երկրորդ հատորը ավելի խնամքով մշակելու և նյութի լավ իմացությանը, հատուկ նվիրվածությանն ու տոկունությանը, որ հանդես է բերել հեղինակը այս հատորը ստեղծելիս, զուգակցի առավել բծախնդրություն, խստապահանջություն։ Ինչ վերաբերում է նկատված վրիպումներին, ապա, կրկնում ենք, դրանք կարելի է շտկել հաջորդ գրքին «հավելված» կցելով։

ՍԱՐԳԻՍ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ՀՇՄԱՐՏԱՑԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԱՆՑՅԱԼԻ ՄԱՍԻՆ

Հայպետհրատը լույս ընծայեց հին բոլշևիկների հիշողությունների ժողովածուի 2-րդ մեծածավալ գիրքը[1]։ Ժողովածուի առաջին գիրքը լույս է տեսել 1958 թվականին։

Հին բոլշևիկների հիշողությունների ժողովածուի 2-րդ գրքում զետեղված են ռևոլյուցիոն շարժումներին և քաղաքացիական կռիվներին մասնակցած 125 հին բոլշևիկների հիշողությունները։

Երկրորդ գրքի հուշերի բացարձակ գերակշռող մասը վերաբերվում է Հայաստանում Սովետական իշխանության հաստատման և ամրապնդման համար մղված պայքարի ժամանակաշրջանին և լուսաբանում է այդ սխրանքներով լի պայքարի պատմության բազմաթիվ փայլուն էջերը։

Ժողովածուի 2-րդ գրքից օգտվելը ավելի դյուրին դարձնելու նպատակով կազմողները գիրքը ըստ թեմատիկայի բաժանել են 3 մասի։ Առաջին բաժնում զետեղված են 13 հին բոլշևիկների հուշերը Վ. Ի. Լենինի մասին (էջ 15—81)։ Նրանք իրենց հուշերում պատմում են Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության մեծ հիմնադիր Վ. Ի. Լենինի հետ տարբեր վայրերում ու պայմաններում ունեցած իրենց ծանոթության, հանդիպումների, ստացած խորհրդավորությունների և իրենց վրա թողած ազդեցության մասին։ Մեր պարտիայի հնագույն

անդամ Իսահակ Լալայանցը, 1893—1900 թվականների ընթացքում Վ. Ի. Լենինի հետ ունեցած հանդիպումների մասին, հուշերում պատմում է, որ ինքը Վ. Ի. Լենինի հետ առաջին հանդիպումն ու ծանոթությունը ունեցել է Սամարայում, այնուհետև Պետերբուրգում և Մոսկվայում։ Ի. Ք. Լալայանցը մեծ հիացմունքով պատմելով երիտասարդ Վ. Ի. Ուլյանովից ստացած իր տպավորությունների մասին, գրում է. «Այդ 23-ամյա մարդու մեջ ամենազարմանալի կերպով զուգակցվում էին մի կողմից պարզությունը, նրբազգացությունը, կենսուրախությունն ու կրքոտությունը և մյուս կողմից՝ մեծալրջությունը, գիտելիքների խորությունը, տրամաբանական անողոք հետևողականությունը, դատողության և սահմանումների պարզորոշությունն ու հստակությունը» (էջ 18)։ Արտաշես Կարինյանը, Հմայակ Բեգլուևը, Միխայիլ Դեմետևը, Շուշանիկ Մանուչարյանցը, Ռաֆայել Կարապետյանը, Ասքանազ Մռավյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Վարդուշ Տարախչյանը, Մարիա Սաթյանը, Աղասի Վարդանյանը, Մամիկոն Կորխմազյանը և Օլգա Հովհաննիսյանը իրենց հուշերում խոսում և բնութագրում են Վ. Ի. Լենինին որպես պայծառ ու պարզ մարդու, ականավոր ռևոլյուցիոն տրիբունի, խոհեմ գիտնականի, աշխատավորության հանճարեղ առաջնորդի, դեպի շարքային մարդը ունեցած ուշադիր ու զգայուն վերաբերմունքի, կենդանի խոսքի, անմարելի ու անմոռանալի հմայքի, իրենց վրա թողած խոր տպավորությունների և բախտորոշիչ լենինյան ազդեցության մասին։

Լսելով Լենինին, մենք տեսանք և համոզվեցինք, որ նույնիսկ «ընթացիկ մոմենտի» մասին կարդացած իր զեկուցման մեջ ականավոր ռևոլյուցիոներ տրիբունը միաժամանակ շատ խոհուն գիտնական է, որի զեկուցման թե կուռ հյուսվածքը և թե մեթոդոլոգիան մեզ՝ երիտասարդ մարքսիստներիս համար շատ և շատ ուսանելի են,—գրում է հին բոլշևիկ Արտաշես Կարինյանը։

Լենինի աշխատությունների ազդեցության ներքո մենք սկսեցինք նոր լույսով մոտենալ Մարքսի և Էնգելսի երկերի ուսումնասիրությանը։ Լենինն օգնեց մեզ ճշգրիտ դիրքերից մոտենալ գիտության նվաճումներին և մշակույթի կարևորագույն արժեքները քննականորեն յուրացնելու գործին» (էջ 33—34)։

Վ. Ի. Լենինի գրադարանի աշխատակից, 1917 թ. պարտանդամ, Շուշանիկ Մանուչարյանը գրում է. «Երբ նա առաջին անդամ մտա Վլադիմիր Իլյիչի աշխատասենյակը, ապշել էի կահավորման պարզությունից և պահարանում գտնվող գրքերի ոչ մեծ քանակությունից» (էջ 43)։ ապա եզրափակելով իր հուշերը ասում է. «Շրջապատողների նկատմամբ Վլադիմիր Իլյիչի ունեցած վերաբերմունքի մեջ մեծ սրտակցություն կար։ Նա մեր շարքային աշխատողներիս նկատմամբ շատ ուշադիր էր, հոգատար, զգայուն։ Նրա ղեկավարությամբ աշխատելը հեշտ էր և հաճելի» (էջ 51)։

1920 թվականի աշնանը Հայոնկոմի անդամներ՝ Ասքանազ Մռավյանը և Սահակ Տեր-Գարրիելյանը Մոսկվայում այցելում են Վ. Ի. Լենինին և պատմում դաշնակներից նոր ազատված Հայաստանի ծանր դրության մասին։ Այդ հանդիպման մասին Աս. Մռավյանի «Լենինի մոտ» հուշերում ասված է. «Երկու բոպե միայն սպասելով՝ մտանք Վլադիմիր Իլյիչի կաբինետը։

Ուշադիր հայացքով Իլյիչը վեր կացավ տեղից, առաջ եկավ մինչև սենյակի կեսը, աշխույժ սեղմեց մեր ձեռքը. «բարև, ընկերներ» ասելով, և առաջարկեց նստել, աթոռներ առաջ քաշելով մեզ համար։

Վլադիմիր Իլյիչի այդքան նրբազգաց սիրալիությունն ինձ ճնշեց, բայց և այնպիսի վստահություն ներշնչեց, որ նստեցի նրա գրասեղանի առաջ՝ իրրև հին մտերիմ բարեկամի մոտ, որից ոչինչ չունենս թաքցնելու։

Ընկեր Տեր-Գարրիելյանն ասաց.

— Վլադիմիր Իլյիչ, Հայաստանը սովետական է, բայց նա շատ ծանր պայմաններում է, պարեն չկա...

...—Մենք ինքներս դժվարին դրության մեջ ենք, բայց Սովետական Հայաստանին կօգնենք ամեն կերպ։

...Վլադիմիր Իլյիչի խոստումը՝ ամեն կերպ օգնել Սովետական Հայաստանին, սին խոսքեր չէին։ Ժողկոմսովետից համապատասխան հրահանգ էր ուղարկվել ժողկոմատներին։

Տեսակցության հետևյալ օրը ֆինժողկոմատի անդամ ընկ. Ջուցկևից ստացանք երկու միլիարդ դրամ սովետական թղթադրամով, որը ոսկու հաշվով հավասար էր մոտ 600.000-ի։ Պարժողկոմը խոստացավ հաց, մանուֆակտուրա, ուրիշ մթերքներ» (էջ 61—62)։

Լենինը խոսում էր պարզ,— գրում է Աշոտ Հովհաննիսյանը և ավելացնում. «Թվում էր, թե

---

1 Հին բոլշևիկների հիշողություններ, հատոր 2-րդ։

նա մտածում էր այնպես, ինչպես ինքդ, արտահայտում մտքեր, որ ինքդ ևս ունեցել ես։ Բայց հենց դրա մեջ էր Լենինի մեծությունը, նրա հանճարի ժողովրդայնության մեծագույն ապացույցը» (էջ 66)։

Գրքի 2-րդ բաժինը բացվում է 1902 թվականից բոլշևիկյան պարտիայի անդամ Նինա Ալաչալովայի «էջեր իմ հիշողություններից» ընդարձակ հուշերով։ Ն. Ալաչալովան մեծ գոհունակությամբ և հիացմունքով պատմում է Անդրկովկասյան բոլշևիկյան կազմակերպություններում (1903—1920) կատարած իր պրոպագանդիստական, կազմակերպական ռևոլյուցիոն լեգալ և անլեգալ աշխատանքների մասին։ Նա գրում է. «Հիշողությանս մեջ անջնջելի են մնացել իմ պրոպագանդիստական աշխատանքի տարիները (1903—1906)։ Երբեք չեմ մոռանում այն հոգեպարար զգացումը, որով համակված ես տուն էի վերադառնում բանվորական խմբակի պարապմունքից։ Սիրտս տրոփում էր ուրախությունից ու գոհունակությունից, որ ես այդքան մեծ ու արկավոր գործ եմ կատարում։ Ինձ այդ գործին էր կոչում բանվորների ցուցաբերած հետաքրքրությունը պարապմունքների նկատմամբ, նրանց կազմակերպվածությունը, կարգապահությունը, նրանց անսահման նվիրվածությունը բանվոր դասակարգի ազատության գործին» (էջ 85)։ Ալաչալովան շատ նոր էպիզոդներ է պատմում Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժումների պատմությունից։ Հիշում է նաև, որ Կամոն կարճ ժամանակամիջոցում յուրացրեց ՌՍԿ(բ)Պ ծրագիրը և «Կոմունիստական մանիֆեստը»։

Սարգիս Խանոյանը (ՍՄԿՊ անդամ 1902 թ.), Աշոտ Խումարյանը (ՍՄԿՊ անդամ 1898 թ.) իրենց հուշերում պատմում են Կամոյի մասին։ «Կամոն,—գրում է Խումարյանը,—առասպելական հանդուգն ու խիզախ մի ռևոլյուցիոն դեմք էր, որին կարող էր ծնել բանվոր դասակարգը միայն» (էջ 113)։

Սարգիս Կասյանը և Հակոբ Հակոբյանը պատմում են Սուրեն Սպանդարյանին և բնութագրում նրան որպես պայծառ դեմքի։

2-րդ բաժնում զետեղված հուշերը գերազանցապես պատմում են Անդրկովկասի նախահոկտեմբերյան շրջանի կոմունիստական կազմակերպությունների գործունեության և ռևոլյուցիոն շարժումների առանձին դրվագների, էպիզոդների, դեմքերի ու դեպքերի մասին, որոնք նշանակալի հետաքրքրություն են ներկայացնում անցյալի ռևոլյուցիոն շարժումների պատմությունն ուսումնասիրողների և ընթերցողների համար։

Հոդվածուի 3-րդ բաժնում՝ (747 էջ) «Պայքար Հայաստանում Սովետական իշխանության հաստատման և ամրապնդման համար» ընդհանուր վերնագրի տակ, հուշերը զետեղված են ըստ Հայաստանի տվյալ ժամանակաշրջանի վարչական բաժանման, ըստ առանձին գավառների ու շրջանների՝ Երևան, Ալեքսանդրապոլ (Լենինական), Կարս, Սարիղամիշ, Կաղզվան, Նոր Բայազետ (Կամո), Շամշադին, Իշևան, Դիլիջան, Զանգեզուր և Դարալագյազ (Եղեգնաձոր), Լոռի-Փամբակ և այլ շրջանների ու բնակավայրերի ռևոլյուցիոն անցյալից ենթաբաժիններով։ Զարխնչի (Կույրիշև) կոմբշիշի և Դարալագյազի աշխատավորության պայքարը ներկայացված են կոլեկտիվ կերպով, որը հուշերը էլ ավելի համոզիչ է դարձնում, նրանց տալիս փաստաթղթի բնույթ։ Գրքի այս բաժնում պատմվում է 1917—1921 թվականներին Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների և նրանց ղեկավարությամբ ծանր պայմաններում մղած հերոսական պայքարի և տրագիցիաների մասին։ Հեղինակները վերհիշում են այդ կռիվներում Հայաստանի տարբեր շրջաններում հերոսի մահով զոհված իրենց մարտական անմոռաց ընկերներին. տալիս բազմաթիվ դեպքերի ու դեմքերի գնահատականներն ու բնութագրերը, հիշատակում բազմաթիվ նոր էպիզոդներ։

Այս բաժնում հեղինակների մի մասը պատմում են դաշնակների դեմ 1920 թվականի մայիսի զինված մասսայական հերոսական ապստամբության մասին։ Այդ թեմային են նվիրված Եղիշե Գալոյանի, Արշակ Գոգունցի, Նահապետ Կուրդինյանի, Աղարեկ Շահնազարյանի, Հովհաննես Գրիգորյանի և ուրիշների հուշերը։

Ալեքսանդրապոլ (Լենինական) քաղաքի և գավառի կոմունիստական կազմակերպության անդամները նոր մանրամասնություններով պատմում են դաշնակների արյունոտ տիրապետության դեմ քաղաքի և գավառի աշխատավորության մղած հերոսական պայքարի շատ արժեքավոր դեպքերի ու դեմքերի մասին։

Լևոն Դասպարյանը և Սարիբեկ Հովհաննիսյանը պատմում են Կաղզվանի բոլշևիկների լեգալ և անլեգալ աշխատանքի ու պայքարի մասին, Իվան Պաշալովը և Դմիտրի Մելիքյանը (Մելիկով) նկարագրում են Կարսի ռևոլյուցիոն շարժումների և 1920 թ. ապստամբության, իսկ Արաբ Շամիլովը Սարիղամիշի մասին։ Ա. Սարգսյանի, Գ. Սահակյանի, Ա. Շահնազարյանի, Մ. Վելիկանովի հուշերում շատ էջեր են նվիրված 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում, Վ. Ի.

Լենինի ցուցումներով, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, ռուս մեծ ժողովրդի կողմից Անդրկովկասի՝ այդ թվում նաև հայ ժողովրդի վերջնական ազատագրման համար մղված պայքարում ցույց տրված եղբայրական, անշահախնդիր ռազմա-քաղաքական և տնտեսական մեծ օգնության, մարտերում կոփված բարեկամության և պրոլետարական ինտերնացիոնալիզմի մասին։

20-րդ դիվիզիայի հրամանատար Միխայիլ Վելիկանովը գրում է. «Հայաստանի աշխատավորները, հույսը դնելով հարստահարվածների պաշտպանի՝ Սովետական Ռուսաստանի Կարմիր Բանակի վրա, առանց մեծ ճիգերի տապալեցին դաշնակցական կառավարությունը և Սովետական իշխանությունը հաստատուն դարձնելու համար օգնություն խնդրեցին Սովետական Ռուսաստանից, որն անմիջապես արձագանքեց նրանց դիմումին» (էջ 260)։

Մի շարք հեղինակներ իրենց հուշերում խոսում են դաշնակների փետրվարյան ավանտյուրայի մասին Երևանում և նրա շրջակայքում, Ղամարլվի, Դարալագյազի, Զանգեզուրի, Նոր Բայազետի, Ելենովկայի, Ախտայի, Սպիտակի և այլ ռազմաճակատներում ծավալված թեժ քաղաքացիական կռիվների և Հայաստանի Կարմիր Բանակի ու 11-րդ հերոսական բանակի կողմից Հայաստանից դաշնակներին վերջնականապես դուրս վռնդելու համար մղված հերոսամարտերի մասին։ Հիշում են այդ մարտերում զոհված, դաշնակների կողմից դաժան խոշտանգումների ենթարկված շատ կոմունիստների, քաջարի սովետական հայրենասեր քաղաքացիների ու մարտիկների, որոնք չեն խնայել իրենց կյանքն ու արյունը Սովետական իշխանության համար։ Այս բաժնում խոսվում է նաև հայ և ադրբեջանցի աշխատավորության դաշնակների դեմ մղած համատեղ պայքարի՝ հատկապես Արաս-Կուլի բեկի-Շաղլինսկու «Կրասնի տարոր»-ի («Կարմիր գումարտակ») և նրա քաջագործությունների մասին, որը հանդիսանում է հայ և ադրբեջանական ժողովուրդների բարեկամության վառ օրինակներից մեկը։ Ընթերցողը ժողովածուի այս բաժնում իմանում է ոչ միայն ադրբեջանցիների, այլև այն մասին, թե ինչպես հայ աշխատավորությունը, ռուսական գնդերի, ուկրաինացիների, լատիշների, թաթարների, քրդերի, հույների և այլ ազգությունների աշխատավորության ներկայացուցիչների հետ կողք-կողքի, ուսուսի տված, դաժան մարտեր են մղել դաշնակ ավանտյուրիստների դեմ, Արարատյան դաշտավայրում, Զանգեզուրի և Դարալագյազի լեռներում ու թե ինչպես նրանցից շատերը հերոսի մահով ընկել են մարտի դաշտերում կամ ցած են գցվել Տաթևի ժայռերից հայ ժողովրդի վերջնական ազատագրման համար։

Ժողովածուի հուշերում պատմվում են ոչ միայն Հայաստանի տարբեր շրջանների, այլև 1917—1921 թվականների Բաքվի և Ադրբեջանի այլ շրջանների, Աստրախանի, Հյուսիսային Կովկասի ու Սովետական Ռուսաստանի այլ վայրերի ռևոլյուցիոն պայքարի և քաղաքացիական կռիվներում հայ աշխատավորության մասնակցության մասին. Սովետական Ռուսաստանի քաղաքացիական կռիվների լեգենդար հերոս Հայկ Բժշկյանը (Դայը) 1930 թ. գրած իր «Մացակ բիձան» հիշողություններում պատմում է՝ ինչպես 1918 թ. հունվարին հեռավոր Սամարայում իր մոտ է գալիս 1905 թ. Օրենբուրգ դաղթած 65-ամյա բանվոր Մացակ բիձան և համառությամբ խնդրում է, որ իրեն կամավոր գրեն կարմիրգվարդիականների շարքերում։ Հետագայում Դայի հրամանատարության ներքո Մացակ բիձան մասնակցում է մարտական գործողություններին, մի քանի անգամ վիրավորվում և իր սխրագործությունների համար պարգևատրվում «Կարմիր Դրոշի» մարտական շքանշանով (էջ 755)։

Ժողովածուում զետեղված հուշերի մեծ մասը նոր է հրապարակվում։

Գիրքը զերծ չէ նաև թերություններից։ Ժողովածուում կրկնողությունները շատ են։ Հանրահայտնի տարեթվերի փոխարեն (Կարմիր Բանակի զորամասերի մուտքը Հայաստան, Հայկական Կարմիր Բանակի կազմակերպումը, 1921 թ. Փետրվարյան ավանտյուրայի սկսվելը և այլն) հուշերի հեղինակները տարբեր տարեթվեր են հիշատակում։ Կան անուն ազգանունների աղավաղումներ։ Գեներալ Դուտովի փոխարեն (էջ 749—55), օրինակ, գրված է Դուրով։ Անձնանունների ցանկում բոլորի անուն ազգանունները չեն նշված։ Այդ և այլ կարգի մանր թերությունների խմբագրության ընթացքում միանգամայն հնարավոր էր խուսափել։

Լույս ընծայված 2-րդ գիրքը տպագրության է պատրաստել ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի գիտական աշխատողների բրիգադան։ Գրքի պատասխանատու խմբագիրն է պատմական գիտությունների թեկնածու Վ. Ն. Ներկարարյանը։ Ժողովածուում զետեղված հուշերի հեղինակների համառոտ կենսագրական տվյալների տեքստը կազմել է Ի. Ա. Թարիյանը։ Ժողովածուն ունի անձնանունների և աշխարհագրական անունների ցանկ, որոնք ընթերցողին կօգնեն ավելի արագ կողմնորոշվելու և հասկանալու ընթերցվող նյութը։

Ա. Ս. ՍԱՐԳՍՅԱՆ